

և ճշմարտութեան սուրբ գաղափարը: Ով պատրաստակամութիւն ունի այսպէս Զրիստոսի խաչն առնելու և Նորա ետեւից գնալու: ում՝ առաջնորդող սուրբ գաղափարն է և բոլոր գործերն այդ գաղափարից են բղխում՝ նա իսկական մտքով եկեղեցական է: Թէկուզ դորա համապատասխան տարազ չունենայ՝ մի աշխարհոջակ քաղաքական գործիչ լինի: ինչպէս Գլադստոն: կամ փողոցներ աւելող մի յեախն մշակ: Եկեղեցին չէ պահանջում: որ իւր պաշտօններին վերայ իրեն մի առանձնաշնորհեալ և բոլոր միւս մարդկանցից զերազանց դատակարգի վերայ նայեն: քայց կարում է նոցա իրենց շրջապատից, ազատ է կացուցանում՝ միւս աշխարհային պարտականութիւններից, որպէս զի միջոց և կարողութիւն ունենան իրենց կոչման պահանջած սրբազան պարտքերը կատարելու: Իսկ այդ պարտքերը կատարելու համար որոշ կրթութիւն և գիտութիւն, ծանօթութիւնների և հրահանգութիւնների որոշ պաշար է պահանջուում: որ իւր մէջ ամփոփել աշխատում է համալսարանների աստուածաբանական բաժինը: Սուտ է թէ մենք ստել ենք՝ միայն աստուածաբանը կարող է լաւ հոգեւորական լինել: այդ ասում ենք՝ հոգեւոր կոչման համար պատրաստող միակ բարձր գիտութիւնը աստուածաբանութիւնն է: և կրկնում ենք, որ այդպէս եղել է միշտ: որ այլ կերպ չեն հասկացել և այլ կերպ չեն պատրաստուել մեր եկեղեցւոյ հայրերը: որ այսօր եւս՝ ինչ ծանապարհով ուզում է լինի: դպրոցում՝ թէ դուրսը: հայրենի երկրում՝ թէ օտար տեղ՝ պէտք է կարեւոր հրահանգութիւններ և գիտութիւն ձեռք բերած լինի մէկը: քրիստոնէական աշխարհայեցողութիւն ունենայ և հաստատուն համագումներ: որպէս զի մտքուր խղճով կարողանայ հոգեւորական կոչումն ընդունել: Չենք ուրանում: որ կոչումն կատիպէ շատերին յետոյ իսկ պակաս մնացած հրահանգութիւնները ձեռք բերել և խախտա համագումներն ամբաստնող: քայց եկեղեցւոյ սպազան բաղդի հաճոյքին թողնել այդպէս՝ մեր իրաւունքը չէ: մենք պէտք է աշխատենք սպազայ հոգեւորականներին իրենց կոչման համապատասխան

կրթութիւն տալ: և սպա իրաւունք ունենանք յոյս դնելու ս. Հոգւոյ շնորհաց առատ ներգործութեան վերայ: որից կախուած է նոցա իսկական արժանիքը:

Կ. Վ.



ՄԱՅՐ ԱԹՈՒ.

Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետ մի անգամ ևս Բիւրական ամարանոցում մի քանի օր անցնելուց յետոյ (յուլիս 18—22) փոքր ինչ տկարութիւն զգալով՝ ստիպուած էր իւր վարուց ի վեր ծրագրած ճանապարհորդութիւնը դէպի Տաթև մինչև յուլիսի 26-ը յետաձգել: Այդ օրը կէսօրից յետոյ ժամի 5-ին Նորին Վեհափառութիւնը սկսեց իւր ուղեգնացութիւնը՝ մինչև Վաղարշապատի այգիներից դուրս կասքով: ուր իջաւ, օրհնեց ճանապարհ ձգելու համար եկած Դեր. Սուքիաս և Արիստակէս Սրբազաններին, Արծ. Համազասպ, Ղեռնդ, Յուսիկ, Աշոտ, Կարապետ և Բարդէն վարդապետներին, զիւզացի մի խումբ ձիաորների և ապա ձի նստելով իւր շքազիրների փոքրիկ խմբի զլուին անցաւ և յառաջ արշաւեց, իւր հետ տանելով յետ մնացածների ջերմ բարեմաղթութիւնները: Վեհափառ Հայրապետին ուղեկցում են Բարձր. Գարեգին վարդապետ և Դիւանապետ Արծ. Կորիւն վարդապետ: Առաջին զիշերը Նորին Սրբութիւնը բարեհաճել էր Մողէի ս. Գէորգ փանքում անցնել. յաջորդ օրը հիւր է եղել Դեր. Սարգիս արքեպիսկոպոսի մօտ նորա ծննդավայր Ղարաբուլաղ գիւղում, երրորդ զիշերը փանքապատկան Բճնի գիւղում է անցրել և չորրորդ զիշերը ծաղկունք գիւղում: յաջորդ օրը վերջապէս հասել է Սեան, ուր Վեհափառի գալտեանն սպասում էր Երևանի Փոխանորդ Դեր. Մերսէս արքեպիսկոպոսը՝ ուղեկցելու համար դէպի Տաթև:

Մի զիշեր միայն այդտեղ մնալով՝ յուլիս 31-ին Նորին Վեհափառութիւնը մեկնել է և օգոստոս 1-ին հասել է Նոր Բայրազկի, որտեղից ճանապարհը Դարալագեազի վերայով

է շարունակել և ս. Խաչ վանքում օթեանել: Ամսոյս 12-ին Կեօրիսից ստացուած հեռագիրը հաղորդում է, որ այդ օրը առաօտեան ժամի 11-ին վեհափառ Հայրապետն իւր ուղեկիցներէ հետ ողջամբ Տաթևի վանքն է ժամանել:

Նորին Սրբութեան բացակայութեան միջոցին տեղապահութեան պատիւը կվայելէ ս. Սինօզի առժամանակեայ աւագ անդամ Գեր. Արիստակէս արքեպիսկոպոսը:

Յուլիսի 16-ին գէպի իրենց վիճակներն ուղևորուեցան Հնդկաստանի և Ատրպատականի նորընտիր առաջնորդներն՝ Գեր. Մաղաքիա և Մահակ եպիսկոպոսունք. Մայր Աթոռի գրեթէ ամբողջ միաբանութիւնը ժողոված էր բարի երթ մտղթելու: Երկու Սրբազանները միասին պէտք է ճանապարհորդէին մինչև Թաւրիզ, ուր և հասել են ողջամբ յուլիսի 23-ին ու պառշաձաւոր ընդունելութիւն գրտել: Տէր Մաղաքիա եպ. Տէրունեան ցամաքի վերայ կշարունակէ այդտեղից իւր ճանապարհը գէպի Նոր—Ջուզա:

Յուլիսի 29-ին ևս նորընծայ Գեր. Յովսէփ եպիսկոպոսը գէպի իւր պաշտօնատեղին— Ամերիկա ուղևորուեցաւ: Սրբազանը Սև ծովի և Միջերկրականի վերայով պէտք է ճանապարհորդէ և այցելէ Մարսէլլի, Փարիզի, Լոնդրայի և Մանչեստրի հոյ դալովթներին:

Արժ. Գարեգին վարդ. Յովսէփեան Ճեմարանի մի խումբ ուսանողներէ հետ գէպի Դարալագեակ կատարած ճանապարհորդութիւնից վերադառնալով՝ յուլիսի 28-ին ուղևորուեցաւ գէպի Աբասթուման, առողջութիւնը վերականգնելու նպատակաւ:

Յունիսի 18-ին Գեր. Սուքիաս արքեպիսկոպոսը վարդապետութեան մասնաւոր աստիճան շնորհեց Բարեշն, Ղուկաս և Բարգէն արեղաներին:

Նուիսի քաղաքի սյրխացած երիտասարդ Եղիշէ քահանայ Ահարօնեան Մայր Աթոռի միաբան ընդունուելով յուլիսի 12-ին կրօնաորութեան վեզար ստացաւ Գեր. Մաղաքիա սրբազանի ձեռքով:

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ:

Մայր Աթոռի մասնադարանի համար Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերութիւնից ստացել ենք 22 կտոր զիւրք՝ իսկ պ. Աղանեանից իւր հեղինակութիւնը՝ Contribution a l'étude des trophiques dans L'hémiplogie organique.

Խորին շնորհակալութիւն:

Մասնադարանայեա՛

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԳԱՊԵՏ ՅԱՎՍԷՓԵԱՆԵՑ.

Հասցէն՝ Въ Монастырскую Библиотеку. Эчмиадзинъ.

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք .

Վարդապետի կիրակին և հետեւալ օրը Կ. Պոլսոյ եկեղեցիներուն մէջ կարգացուեցաւ Ս. Պատրիարք Հօր Կոնդակն որով, Կրօնական ժողովոյ որոշման համեմատ, իսպառ կարգադուրի կհճըռչակէ Կէօքեան Կիրակոս անուն վարդապետն, որ ապաշխարութեան համար Մարդուանի վանքը զըրկուած էր: Կյիշեցնէ թէ արդէն 1895 յուլիս 7-ի Կոնդակաւ արգիլուած էր եկեղեցական պաշտօն վարելէ: Եւ այս ինքզինք չէր ուղղած, և այնպիսի անվայել վարմանց մէջ գտնուեցաւ որ հարկ եղաւ մայրաքաղաքէն հեռացնել: Մարդուանի վանքին մէջ ալ փոխանակ ինքզինք ուղղելու, ետ չկեցաւ զըրճուամերէ և յանդգնութիւններէ, և անվայել կերպերով ս. պատարագ մատուցց, որով Ամասիոյ Խառն ժողովին բողբներուն առիթ տուաւ: Կրօն. ժողովրն համոզուելով որ այս վարդապետ անուղղայ պիտի մնայ, այս անգամ կրօնաւորի հանգամանքն և պաշտօնն և անոր ամէն իրաւասութիւնները կառնու յիշեալ վարդապետէն: Աստուծոյ շնորհն հայցելով անոր և անորդէսներուն վրայ:

ՏԵՂԵԿԱԳԻՐ *

ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻ ԳՈՐԾԱԳԻՐ ՄՆԱՅՈՒՆ ԵԱՆՉՆԱԺՈՂՈՎՈՅ Ի ԺԲ. ՀԱՆԳԻՍԻ ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՄԲՅԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹԵԱՆ Ի 25 յունիս 98.

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր և Պատկառելի Հանդիսականք.

* Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարխանից հրատարակուի համար մեզ ուղարկուած. Խմբ.

Իզմիրեանց Ատակի գործադիր մնայուն Յանձնաժողովս իր պաշտօնափարութեան հնգամեայ երկրորդ շրջանն ևս աւարտելէ յետոյ՝ թէև համարատուութեան տեղեկագրով մը հրաժեշտ մատուցած էր իր պաշտօնէն սակայն պատկանելի Խառն ժողովը պահասեալ երեք անդամոց տեղ նորոգ ընտրութեամբ հնգամեայ երրորդ շրջանի մը համար ևս վերակոչած լինելով զինքն ի պաշտօն։ Յանձնաժողովս բարեբախտ կհամարի զինքն որ այս երկուսասներորդ անգամ ըլլալով՝ պատիւ կունենայ կատարել Սահակ—Մեսրոպեան մրցանակարաշխութեան հանդէսն, զոր ինչպէս յայտնի է՝ հաստատած է բարեյիշատակ Աղա Յովսէփ Իզմիրեանց գովի զգացմամբ և կտակաւ։

Այս տարւոյ շրջանին մէջ ներկայացուած են Յանձնաժողովոյս հետեւեալ եօթն երկասիրութիւնները.

1.—Քուռացի արձանագրութիւններ ի Ռուսաստան, գործ Պ. Խաչատուր Յովհաննէսեանցի, տպեալ ի վանս. Ազգարու ի Աննտիկ, 1897-ին.—Այս գործ որ կրաղկանայ 63 էրեսներէ և ժ.Ա. գլուխներէ, քաղուածոյ թարգմանութիւն մ'է Ենիկոլլուկու Անդրկովկասի բեկնագիր արձանագրութիւններ անուն զիրքէն, և համառօտ տեղեկութիւններ կուտայ ուսական հայ դաւաններուն զանազան տեղերը գտնուող բեկնագիր արձանագրութիւններուն վերայ։

2.—Ատանցաւ գործ Պ. Ե. Լալանեանի տպագրեալ 1887-ին ի Տիփլիս ի տպարանի Մ. Կ. Ռօտինեանցի, Կը բաղկանայ 244 էրեսներէ և կպարունակէ իր մէջ Ըուշի քաղաքի վերաբերող մի քանի պատկերներ, տեղեկութիւններ կուտայ Աւարանդա գաւառի քաղաքներուն, լեռներուն և գիւղերուն, և կլիմային ժողովրդեան և անոնց սովորութեան ու արհեստներուն վերայ և ինչ, ինչ, զանազան հեղինակներու գործերէ հաւաքածոյ մը, որ արդէն հրատարակուած է նոյն իսկ Լալանեանցի «Ազգագրական Հանդէս»-ին մէջ։

3.—Միխայիլ Ա. Նալբանդեան գործ Պ. Երուանդ Ըսհազիզի տպեալ ի Մոսկուա ի տպարանի Բ. Բարխուդարեանի, 1897-ին, Այս գործ որ 151 էրեսներէ և ժ.Ա. գլուխներէ կրաղկանայ, պարզ կենսագրութիւն մ'է հանգուցեալին։

4.—Մայասուր Արափեան.—Գործ Պ. Ներսէս Տէր Կարապետեանի տպեալ ի Տիփլիս ի տպարանի Մ. Ըարաձէի և Անկերութեան, 1897-ին, կրաղկանայ 138 էրեսներէ և ժ.Պ. գլուխներէ, սա ևս պարզ կենսագրութիւն մ'է հանգ. գիտնական Խաչատուր Արօվանի և արտատպեալ «Լուսնայ» գրական հանդէսէն։

5.—Սոկրատայ Միդասիկոսի եկեղեցական Պատմաբիւն.—Հրատարակութիւն ս. Էջմիածնայ միւսրան Տ. Մեսրոպ Ա. Տէր Մովսէսեանի տպեալ ի ս. Էջ-

միածին, 1897-ին, Այս գործ հրատարակութիւն է Սոկրատայ եկեղեցական պատմութեան և Սեղրիտարոսի վարուց պատմութեան, ըստ թարգմանութեան նախնաց, որոց կցած է հրատարակիչ վարդապետն օրինակաց բաղդատութիւններ և մանր ծանօթութիւններ, և սկիզբը զրած է հարիւր էջէ բաղկացեալ յառաջարան մը, յորում կխօսի հրատարակեալ մատենագրութեանց ձեռագիրներուն վրայ, որը կգտնուին ի ս. Էջմիածին և ի ս. Երուսաղէմ և ի Աննտիկ, և տեսութիւններ կընէ Կոստանդիանոսի գարձին պատմութեան վրայ և կրաղգատէ Խորենացւոյն և Մեծ Սոկրատի և Սեղրեսարոսի վարուց պատմաները։

6.—Եղիշէ գործ Տ. Բարդէն Ծ. Ա.-ի Կլելէսէրեան առաջն. Տեղապահին ճանիկի. ձեռագիր.—Այս աշխատութիւն 500 էրեսներէ բաղկացեալ և մի յառաջարանով և մի ներածութեամբ չորս գրքերու բաժանեալ քննական ուսումնասիրութիւն մ'է, ցուցնելով խուզարկութեանց համար տեսած հեղինակներն և հրատարակութիւնները, թարգմանութիւններն, ուսումնասիրութիւններն և ձեռագիրներն. ընդարձակ ծանօթութիւններ կուտայ Եղիշէի անձին և իր պատմագրութեան նիւթին վերայ, կխօսի նոյն գրութեան ժամանակին ու աղբիւրներուն վրայ, ծանօթութիւններ կուտայ Եղիշէի վերագրեալ ուրիշ գործոց վրայ, թէ պատմական և թէ գրական տեսակետէն ամէն խնդիրներն յառաջ կընրէ և լուծումները կցուցնէ. կխօսի նաև մոզական կրօնքին և վարդապետութեան, և բարոսականին, և ծէսին ու օրէնքին ու պաշտօնէութեան վրայ, բացատրութիւններ կուտայ Պ. դարու Հայ Բրիտանոնութեան և Ե. դարու Հայ եկեղեցւոյ վարդապետութեան, խորհուրդներուն, պաշտամանց, պաշտօնէութեան և վանականութեան, և նոյն իսկ Եկեղեցւոյ ոգւոյն վրայ։

7.—Գրիգոր Նարեկացի.—Գործ Տ. Մուշեղ Ծ. Ա.-ի Սերոյբեան, առաջն. Տեղապահին Արարկիրու. ձեռագիր.—Այս գործ մի յառաջարանով և ժ.Բ. գլուխներու բաժանեալ 326 էրեսներէ բաղկացեալ կենսագրական մատենագրական և քննական ուսումնասիրութիւն մ'է, Պատմական և ժամանակագրական տեղեկութիւններ տալէ յետոյ՝ կգնէ ս. Գրիգոր Նարեկացւոյ ծննդեան թուականն, ազգատոհմը, դաստիարակութիւնն ու կեանքը, կթուէ անոր երկասիրութիւններն և կպարզէ մատենագրական ոճն. ընդարձակօրէն կխօսի Նարեկացւոյն ժամանակակից կրօնային ներքին շփոթութեանց և Խոնդրակեցիներու և Անձեացիներու վրայ, Չորս երկար հատուածներով կխօսի Նարեկ աղօթագրոյ գրական արժանեաց, և խմբագրութեան ժամանակին ու պատճառին և աղօթից թուոյն վրայ, և կվերլուծէ ինչ ինչ մասերը խոհուն կերպով, բաղդատութեան

կրնէ Յովհաննէս սարկաւազ և Բենիկ վարդապետաց աղօթքներուն հետ ինչպէս նաև օտարազգի նմանօրինակ երկասիրութեանց հետ: Յատուկ հետազոտութիւն մ' ունի տաղաշափութեան վերայ, և յոռաջ կրերէ նարեկացին աղօթագրքէն դուրս տաղաշափական գրուածները: Կրթարարացն նարեկի լեզուն ու ոճն և մանաւանդ ոչին ու զգացումն առանց ծածկելու ինչ ինչ թերութիւններն և խրթմունքները: Կիսակէ պատմելով երանելոյն վերջին օրերն ու վախճանումն և վախճանելէն յետոյ վայելած բացառիկ պատիւները սրբոց կարգը գատուիչն ու տօնուիչն և նորա անուան վախճար կառուցուիլը:

Յանձնաժողովս վերոգրեալ ևօթն երկասիրութիւնները նախապէս և ըստ օրինի նախաքննութեան ենթարկեց և հետաքննին խուզարկութեամբ եզրակացուց թէ:

Առաջինը՝ Խաչատուր Յովհաննէսեանցի «Բենեոագիր արձանագրութիւններ»-ն օտար լեզուէ պարզ թարգմանութիւն մ' է:

Երկրորդն՝ Ե. Լալեանցի «Վարանդա»-ն հեղինակի մը ամբողջ աշխատութիւնը չէ, այլ հաւաքածոյ հրատարակութիւն մը և

Երրորդն՝ Ե. Շահազիզի «Միքայէլ Նալբանդեանց»-ն և

Չորրորդը՝ Ն. Տ. Կարապետեանի «Խաչատուր Արտփեան»-ն ու զղակի Աղբ. Գրականութեան նպատակով գործեր չեն, այլ մասնակի կենսագրութիւններ, որոց վրայ այլ և այլ անձանց կողմէ նմանօրինակ հրատարակութիւններ եղած են արգէն:

Հետևարար կտակին նպատակին անյարմար գտաւ սոյն չորս հրատարակութիւններն և պատշաճ չգտանց մրցման քննութեան ենթարկել զանոնք, ինչ որ ըրաւ միւս երեք երկասիրութեանց համար:

Հինգերորդը՝ Տէր Մովսէսեան Տ. Մեսրոպ վարդապետի «Սոկրատայ Աքոլաստիկոսի Եկեղեցական Պատմութիւն»-ն յանձնեց Գպրեվանուց փոխտեսուչ Տ. Ազան Ծ. Վ.-ի Համամեան, որ տարւոյս մարտ 16 թուակիր ընդարձակ տեղեկագրով մը ներկայացուց իր քննադատութիւններն ու զիտողութիւնները:

Հմուտ քննիչն այդ տեղեկագրով մի առ մի յոռաջ կրերէ Տէր Մովսէսեան վարդապետի Սոկրատայ Եկեղեցական Պատմութեան քաղած խնդիրներն և Խորենացոյ հետ բազդատութիւններն, և կգտնէ թէ՛ չէ կրցած ստոյգ և վերջնական եզրակացութիւններ ներկայել, այլ խնդիրներն անլուծանելի թողած է. և կը յաւելու թէ՛ «Արդարեւ գեղեցիկ ձեռնարկ մ' է ծանօթացնել հասարակութեան մեր նախնեաց գործերն, և անոնց մէկ քաւնին հարմար մասին վերջերս յերևան եկած թեր ու զէմ կարծիքներն ուղղել. բայց ամէն բան իրեն հաստատուն հիմը պիտի ունենայ, որպէս զի կա-

րենայ մէկն իր շէնքը կառուցանել այդ հիմին վրայ: Պատմական խնդիրներով զբաղողներու հաւամար կարևոր է այդ: Այս տեսութեամբ ներուրեմեկ ըսել թէ Մեսրոպ Վ.-ի գրութիւնը պատմական իրերու մասին շատ անգոր է: Աւելնչ որ բարձրի էր անոր մէջ գտնել, այն չենք գտնել: Սոկրատայ եկեղեցական պատմութիւնն անբաւերութ է մեր մատենագրութեան համար, մանաւանդ փոքրն, որուն մէջ մեր նախնեաց թարգմանութիւններէն շատ մը կտորներ և յաւելուածներ կտեսնենք: Մեսրոպ Վ.րգ. այդ գիրքն իր ամէն մասերովն ուշագրութեան առարկայ ըրած չէ, իր գրածը շատ սեղմ է, կատարեալ ուսումնասիրութիւն չենք կարող համարել զայն:

Վեցերորդը՝ Տ. Բարդէն Ծ. Վ.-ի «Եղիշէ»-ն Յանձնեց նախ Մատթիա Ա. Գարագաշ էֆէնտիի, և սորա իր անձնական տկարութեան համար հրատարակէն յետոյ, յանձնեց Թէրզեան թովմաս էֆ.-ի որ ապրիլ 4 թուակիր քննական տեղեկագրով մը պարզած է իր տեսութիւններն, և կ'եզրակացնէ:

Ամփոփելով մեր տեսութիւնն այս ընտիր երկասիրութեան վրայ, պիտի ըսենք որ իր նուրբ և և խոր հայեցողութեամբք, իր նորանոր լուրջ «խուզարկութեամբք, իր ընդարձակ տեսութեամբք և և զգօն խորհրդածութիւններով, ազգային աւանդութեանց և ի մասնաւորի նխաւաւոյն Եղիշէի ամէն հետամուտ անձանց ընթերցման արժանի է. «փափաքել կուտայ որ այս օրինակ այլևս գրութեամբք արգոյ հեղինակը ճոխացնէ մեր մատենագրութեան քննադատական ճիւղը: Գուցէ ուրեք ուրեք ամէն ընթերցողք համակարծիք չգտնուին իրեն—և այս իսկ է ընդհանրապէս քննադատութեանց ճակատագիրը—, բայց ոչ որ պիտի ուրանայ որ երիտասարդ հեղինակն ո՛ր և է յոգնութեանէ—որչափ տաժանելի ալ ենթագրութիւն— խոյս տեսած չէ իր գործն ամբողջացնելու համար:

«Աւստի ի նկատի առնելով այն հմտալից շարակարգութիւնն, հայեցողութեանց սրութիւնն և ու խորութիւնը, տեսութեանց նորութիւնը, զգուշաւոր խուզարկութիւնները, կորովալի քննադատութիւններն որովք յոյժ օգտակար և հետաքրքրաշարժ կհանդիսանայ այս գործն, ըստ իմ «խոնարհ կարծեաց զայն արժանի կհրատարակեմ «առաջադրեալ մրցանակին»:

Նօթներորդն՝ Տ. Մուշեղ Ծ. Վ.-ի «Գրիգոր Նարեկացի»-ն յանձնեց Աշրգեան Տ. Խորէն Արբազանի, որ ապրիլ 7 թուականաւ յղած է իր քննական տեղեկագիրը:

Ն. Արբազանութիւն այս տեղեկագրով ի վեր կհանէ գործին գերակշիռ առաւելութիւնն ամէն տեսակէտով, և կգովէ երիտասարդ վարդապետին զգայուն և յուզեալ շեշտերով և լի հմտութեամբ

այս աշխատասիրութիւնն արգիւնք անոր հոգեւորական և մարքոր կրթութեան. բայց երկասիրութեան բոլոր առաւելութիւնները ցուցնելէն յետոյ՝ եղբակացութիւնն և դատաստանը զանց կընէ և կը թողու Յանձնաժողովոյս:

Արգ գործադիր Յանձնաժողովս կատարուած սոյն քննութեանց տեղեկագրերն մի առ մի նկատողութեան առնելէ յետոյ՝ ինքն ևս վերջնական քննութիւն մը կատարեց իւր անդամակցաց ձեռքը և ըստ ամենայնի արժանի գատեց Սահակ—Մեսրոպեան Մրցանակին նշան և Գրիգոր Կոթարկացի ստուար և բազմաշխատ և արդիւնաւոր գործերն: Եւ թէպէտ մրցանակի սահմանաւ պարզէն ըստ կտակի տարեկան շուրջ 60 ոսկի է, սակայն յանձնաժողովը ի նկատի առնելով վերոյիշեալ երկու գործոց կարեւորութիւնն ու անհամեմատ առաւելութիւնն, և նախընթաց տարիներէ տրամադրելի մնացած գումարներու մասերը, պատշաճ համարեց իւրաքանչիւրին 40 ոսկի պարզ և սահմանել, ի քաջալեր և ի տրիտուր ջանից մեղուաջան աշխատասիրողաց:

Աւասիկ, Տեառք, ասոնք են ներկայ տարեւորջանի Սահակ—Մեսրոպեան Մրցանակարաշխութեան արգիւնք, և լիայոյս ենք, որ յետ այսու նորանոր արգիւնաւոր աշխատութեամբ առաւել ևս պիտի փայլի Ազգային Գարութեան տաճարն, և Հեղինակք պիտի արժանանան Բարեխիշտակ Յովսէփ Իզմիրեանցի Մրցանակին, և շնորհաց Արքայ Թարգմանչացն Սահակայ Հայրապետի և Մեսրոպայ վարդապետի, մեր երջանկայիշատակ Հարց, զորս կտօնէ պսօք Հայ. ս. Եկեղեցին:

Հրահանգ Ազգային Որբանոցներու.—Ա. Արբանոցին նպատակը պիտի լինի որբերը պատասպարել և նախնական ուսում մ' աւանդել անոնց: Եթէ Արբանոցը քաղաքին մէջ է, տղաքներն Արբանոցին մէջ կպատասպարուին և ուսում առնելու համար կանոնաւորապէս կղրկուին ազգային վարժարանները, Իսկ եթէ Արբանոցը քաղաքէն կամ աւանէն դուրս է և կարելիութիւն չկայ տղաքները դպրոց զրկելու, յարմար կարգադրութեամբ Արբանոցին մէջ կհաստատուին նաև դասախօսութիւնք, դպրոցական նախակրթական ծրագրին համաձայն:

Բ. Արբանոցին մատակարարութիւնն և հսկողութիւնն յանձնուած է Առաջնորդին կամ Տեղապահին կամ Փոխանորդին նախագահութեան ներքե և երեք կամ ի հարկին հինգ անդամներէ բաղկացեալ Հոգաբարձութեան մը, որոց մին քահանայ և միւսներն աշխարհական՝ կընտրուին գաւառական վարչութեան Խառն ժողովէն, և կհաստատուի Պատրիարքարանէն:

Հոգաբարձութեան անդամք պէտք է լինին պարկեշտ, բանիրուն և ընդհանուրին վստահութեան արժանի անձեր:

Գ. Ընդունուելիք որբոց թիւը պիտի սահմանուի Հոգաբարձութեան կողմէ՝ որբանոցին նախական կարողութեան համեմատութեամբ և հաստատուի Պատրիարքարանի կողմէ որբոց խնամակալութեան որոշմամբ: Հասութից առաւելութեան շարժել հետզհետե կրնայ աւելնալ պատասպարելի որբոց թիւն:

Գ. Արբանոցին մէջ տղաք ընտրանօք կանուին թէ քաղաքէն և թէ գիւղերէն որբոց թուոյն համեմատութեամբ, առաջնութիւն ընծայելով միշտ անոնց որք բոլորովին ձեռողազուրկ, անպաշտպան և զուրկ են ապրուստի որ և է միջոցէ:

Պատասպարեալ որբոց մանրամասն ցուցակը պէտք է հաղորդուի Պատրիարքարանի ուր նշանակուած ըլլալու է իւրաքանչիւր տղու անունը, հօրն անունը, մականունն, անհայր կամ անմայր ըլլալը, տարիքն, որ տեղացի ըլլալը, և էն:

Ե. Հոգաբարձութիւնը կպարտաւորի հոգ տանել միանգամայն որ պատասպարեալ որբեր իրենց ընդունակութեան համաձայն մէկ մէկ պիտանի արհեստի վարժուին, որոշեալ օրերու և ժամերու մէջ՝ պարապենելով զանոնք արհեստական աշխատութեանց:

Զ. Արբոց կեդրոնական սնտուկէն Պատրիարքարանի սահմանած տարեկան նպաստը կհատուցուի ամսէ ամիս կամ ըստ պահանջման հարկին՝ երկու կամ երեք ամիսն անգամ մը կանխիկ և կը բանի որբանոցի բացման թուականէն:

Է. Արբանոցը կմատակարարուի կլմտացողցի մը համաձայն, զոր Հոգաբարձութիւնը կսահմանէ և Պատրիարքարանի կողմէ հաստատուելով կգործադրուի:

Ը. Արբանոցի հասոյթք են 1. Արբոց կեդրոնական սնտուկէն յատկացեալ ամսական նպաստը. 2. Տեղական ժողովրդեան կամ բարեւէր անձանց մասնաւոր նուէրներն և պաշտպանեալ սաներու թոշակները. 3. Վանական կամ այլ ազգային եկամտից աղբիւրներէ գոյացած այն հասոյթներ որք մասնաւոր տնօրինութեամբ մը սահմանուած են որբանոցին. 4. Այն ամէն գումարներ զորս Հոգաբարձութիւնը կրնայ տեղական միջոցներով հայթայթել օրինաց սահմանին մէջ:

Թ. Հոգաբարձութիւնը պարտաւոր է ամէն տարեկալուս փակել որբանոցի մատակարարութեան հաշիւներն և մինչև նոր տարւոյ սկիզբն անպատճառ յուլարկել հաշուեցոյցն ի Պատրիարքարան:

Այս հաշուեցոյցին պէտք է կցորդուի նոր տարւոյ ելմտացոյցն ալ, մանրամասն տեղեկագրով մը:

Ժ. Հոգաբարձութիւնը շի կրնար հասոյթէն աւելի ծախք ընել, և պարտք շնդունուիլ:

ԺԱ. Արբանոցին պիտոյից վերաբերեալ գնումները տեղի կունենան Հոգաբարձութեան անդամոց

մեծամասնութեան որոշմամբ և նախագահին հրամանաւ:

ԺԻ. Հոգարարձութիւնը կ'պարտաւորի ամէն վեց ամիսն անգամ մը տեղեկագիր մը յուղարկել ի Պատրիարքարան, որբանոցի բարոյական և ուսումնական վիճակին վրայ: Այս տեղեկագիրն, ինչպէս նաև Հոգարարձութեան կողմէ ուղղեալ բոլոր զբոսութիւնները, պէտք է նախագահին և բոլոր անգամոց ստորագրութիւնը կրեն:

Երկու նոր Արբանոցներ եւս կ'բացուին գաւառաց մէջ, շնորհիւ այն նպատակներուն որբ բարեկերպութեամբ կողմէ խոստացուած են Ս. Պատրիարք Հօր, Սերաստիոյ Անապատի վանքին մէջ 40 որբի համար Արբանոց մը կրանայ ն. Սրբազնութիւնն նախնական ծախքի համար գումար մը և իւրաքանչիւր որբի համար տարեկան վեց ոսկի հաշիւով 240 ոսկի տարեկան գումար մը զնելով Սերաստիոյ առաջնորդ Ս. Պետրոս Սրբազանի տրամադրութեան ներքեւ որ այս ուրախալի լուրն իրեն հետ տանելով Արգապատի պահոց շարժուն կրմեկնի մայրաքաղաքէս դէպի Սերաստիա:

— Երկրորդ Արբանոցն ալ կ'բացուի Մալաթիոյ մէջ, որուն համար ևս Ս. Պատրիարք Հայրը նախնական ծախքի գումար մը և տարեկան 240 ոսկի կը յատկացնէ ի հաշիւ 40 որբի:

— Հարժուս մէջ Տիպիկի առաջնորդական փոխանորդէն Ս. Պատրիարք Հօր գրուած նամակէ մը կիմացուի թէ հոն ալ Առաջնորդարանին հսկողութեան ներքեւ Արբանոց մը բացեր են, տրամադրելի միջոցներուն համեմատ որբեր ընդունելով հետզհետէ:

— Հետզհետէ բացուող այս Արբանոցներուն միօրինակ կազմակերպութեան ու բարեք մատակարարութեան համար Պատրիարքարանի մէջ հրահանգ մը խմբագրուած է, յորում ճշտուած է թէ այն Արբանոցներու զիրքը զորս Պատրիարքարանն ինք կը բանայ իր ուղղակի հսկողութեան ներքեւ և թէ այն որբանոցներու զիրքը զորս ազգային Գաւառային Աարչութիւնք կրանան իրենց պատասխանատուութեան ներքեւ: Այս հրահանգ* պիտի զրկուի թէ պատկանեալ Արբանոցներուն և Գաւառային Աարչութիւններուն և թէ այս նախախնամական հաստատութեանց բարեբարներուն ու օժանդակողներուն որպէս զի զիտնան թէ իրենց որբ զլուս տուած տարեկան 5—6 ոսկին ինչ նպատակով և ինչ մեթոտով կ'ծախսուի:

— Անայ առաջն. Տեղապահին, Աղթամարայ կաթողիկոսական Փոխանորդն և Լիւմ և Պատուց անապատներու վանահայրական Տեղապահը գրած ըլլալով Աարձկանի և շրջակայ մէկ քանի զիւղերու

ազգայնոց կարօտ վիճակն, որոշուեցաւ նպատակարար գումար մը զրիկել կարօտեալներու սնտուկէն:

— Ստեփան փաշա Ասլանեան և Գարրիէլ էֆ. Նորատունիեան յատաջ կտանին Պահմանագրութեան վերաքննութեան աշխատութիւնները:

— Կրօնական Ժողովը գումարեցաւ 7 յուլիսի նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և տտեւագետութեամբ Ս. Գրիգորիս Արքեպիսկ. Յովհաննէսեանի, և ի մէջ այլոց զրազեցաւ հետեւեալ խնդիրներով. — 1. Տ Ազնիկ Ա. Գալփաքձեանի քննութեան յանձնուած Ամասիայի երեք կարևոր խնդրոց վերաքննութիւնն յանձնուեցաւ Սերաստիոյ առաջնորդ Ս. Պետրոս եպիսկոպոսի Իսկ Ս. Տաճատ քհնյ. որ այս անգամ ինչպիսիք էր դատնալ Ամասիայ արտօնուեցաւ մեկնիլ իր երկիրն, առանց սակայն օ և է եկեղեցական պաշտօն կատարելու հոն, Արոշուեցաւ նաև գրել Ամասիոյ Խառն Ժողովին, որ Իրանոսեան Գէորգ Ա. ի յանձնէ Մարդուանու ս. Աստուածածին վանուց տեսչութիւնը: — 2. Մայր Եկեղեցւոյ քահանայից գասէն ներկայացան 14 քահանայ, որոց ծանուցուեցաւ Ժողովին կողմէն թէ Մայր—Եկեղեցւոյ 25 քահանայք բաժնուած են չորս եկեղեցւոյ վրայ, որոց իւրաքանչիւրը պիտի ունենայ իր ուրոյն աւագերէցը, Առայժմ ընդհանուր աւագերէց կարգեցաւ Մայր—Եկեղեցւոյ Ս. Ահարօն քահանան որ պիտի պաշտօնավարէ, մինչև որ բաժանման գործողութիւնք, նիւթական մասին կարգադրութիւնք և ընկատարուին, այս մասին քահանայից գասը տեղեկագիր պիտի մատուցանէ: — 3. Աեօբիան Կիրակոս երբեմն Ա. ն, որ կարգադուրիկ եղած էր Ժողովոյ որոշմամբ, այս անգամ հետագիր զարնելով քննութիւն պահանջած է, Ժողովն արդէն Ամասիոյ Խառն Ժողովին առաջն. Տեղապահին և այլևայլ մասնաւոր անձանց կողմէ եկած հանրագրութիւնները բաւական համարած էր օրինաւոր քննութիւն մը կատարած ըլլալու մասին, և հարկ չտեսաւ նոր քննութեան: — 4. Ժողովը կարգաց Լիւմ անապատի միարանութեան կողմէ խմբագրուած և ի վերացումը Ազգ. Պատրիարքարան զրկուած կանոնագիրն և յանձնարարեց որ ժամանակ մը գործադրուի, և եթէ փոփոխութեանց հարկ տեսնուի տանք ըլլալէ ետք փաւերացուի: — 5. Գաւառաց եկեղեցեաց վրայ ձեռնադրուած մի քանի քահանաներ, որ յետ ձեռնադրութեան պարտաւոր էին մեկնիլ իրենց տեղերը, ցարգ կ'մնան հոս, Արոշուեցաւ որ Աարգապատի տօնէն ութ օր վերջ մեկնին իրենց տեղերը: — 6. Մէրսինի Թաղ. խորհուրդը խնդրած էր որ Գիմարսեան Ս. Խորէն Ա. կոչուի ի պաշտօն քարոզչութեան, Յանձնարարուեցաւ Ատանայի առաջն. Տեղապահին, որ եթէ յարմար կրատէ, զՏ. Խորէն Ա. զրկէ նոյն պաշտօնին:

* Ա կարևոր համարեցիմ վերև յոտուց րեւել: Խմբ.

— Կրօն. Ժողովն որոշեր է Սմբատ Ծ. Ա. -ի քով իրրև օղնական Շապին Գարահիսար զրկել Արսէն Ա. Գեորգեանը :

— Տիրապէքիբէ հասած նամակներ կճանուցանեն թէ տեղւոյն Ասորիք ժամանակէ մը ի վեր ոտնձգութիւններ ընել կուզեն Լճէի զայմագամութեան տակ գտնուող Մակարայեցոց Աանուց մէջ, որ գարիբէ ի վեր Հայ ազգին սեփականութիւնն է, և վերջերս յանդգնութիւնն այն աստիճան առաջ տարած են, որ Ասորի քահանան համարձակած է փանքի քարերուն դաշխլ նորոգութիւններ ընելու պատրուակով: Այս քահանային ոյժ կուտայ Ասորւոց Պատրիարքն, որ նոյն վանքը կըրկէ երեք Ասորի վարդապետ, շինուածնիւթ և ըն. առանց այս ու այն մտիկ ընելու՝ շինութեանց ձեռնարկել հրամայելով: Առաջն. Տեղապահին քանիցս բողոքներուն վրայ, տեղւոյն Կուսակալն հրամայած է քննութիւն կատարել և նորոգութիւնը դադրեցնել:

— Երեք տարի առաջ, Սանասարեան Աարժարանի Հոգարարձութիւնն երկու հազար ոսկիի վճարմամբ գնած էր քաղաքէն դուրս բարձր զիրք ունեցող բարերեր ազարակ մը: Իրրև հաստատ եկամուտ Աարժարանին: Ազարակն այն ատեն Կառավարութեան կողմէ աճուրդի հանուած էր անոր տէրերուն սնանկութեան պատճառաւ և աճուրդէն գնուած էր ի հաշիւ Սանասարեանի: Բայց ասոնք ապա հաստատած ըլլալով թէ հայթհայթուած իրեզինաց փոխարէն, 8,000 ոսկիի առնելիք ունէին տեղային վարչական սնտուկէն: Կ. Պոլիս զիմած և սնանկութիւնը չեղեալ հոչակել տուած են: Հետեւապէս ազարակն ալ անիրաւարար վաճառուած նկատելով, գացած ետ առած և մէջը նստած են ազդուապէս: Սանասարեան Հոգարարձութիւնն հիմայ կամ ազարակն կամ վճարուած և ծախուած դրամն ետ կուզէ: Տեղւոյն վրայ լուծում մը տալ հնար չըլլալով այլ ևս, խնդիրն այս պահուս կ'ըննուի Ատլիէի մէջ ի ձեռն յատուկ յանձնաժողովի մը:

— Նոյն յանձնաժողովին քննութեան ենթարկուած է նաև Ագեսիոյ մեծ և հասութարեր Խանի մը սեփականութեան խնդիրն, որուն համար Առաջնորդարանն ազգային սեփականութիւն ըլլալ կ'պնդէ: Իսկ տեղւոյն Աազֆի պաշտօնարանը «մահլու» կնկատէ:

— Աղթամարայ Աթուղիկոսական փոխանորդ Տ. Արսէն Ա. յայտնելով Սպարկերտի ազգայնոց կրօնափոխութիւնը, կնկարէ Պատրիարքարանէ որ կառավարական հրամանագիր մը զրկուի իրեն, թեմերն այցելելով առաջքն առնելու համար այս կրօնափոխութեանց: Բաց աստի Տ. Արսէն Ա. Ս. Աթուղի խարխուլ և կարօտ վիճակն յայտնելով զարման կնկարէ:

— Առանայէ գաղթականներու դարձը դադարած չէ: Ամէն ԲՇ. մէկ կամ քանի մը տասնեակ կուգան, թէև ոչ առջի բազմութեամբ, երէկ ալ

10 հոգի եկան, և ուղղապէս Աստիկանութեան Գուռն առաջնորդուեցան, ուր այսօր Պատրիարքարանի կողմէ ապահովագրեր տրուելէ և երաշխարներ գտնուելէ ետքը պիտի արձակուին: —

— Աաղուեան Լոյտի շոգենաւով ալ Փոքր Ասիոյ արեւելեան գաւառներէն եկողները կուպսուին: Գաւառէ ի գաւառ տեղափոխութեան և գործի համար ճամբորդութեան հիմակ աւելի մեծ զիրութիւնք կտրուին:

— Կեսարիոյ գաւառային ժողովը գումարուեցաւ Յունիս 25-ին, և քանի մը տարի առաջ տրուած որոշումը կրկնելով, վերջապէս կպիսկոպոսական վկայագիր տուաւ Կեսարիոյ Առաջնորդ Տ. Տրդատ Ծ. Ա. Պալեանի:

Հանդուցեալ Աղափիրեան Գրիգոր կպիսկոպոսի համառօտ մահացուցալը տպագրելով՝ մենք ցանկութիւն էինք յայտնել նորա աւելի ընդարձակ կենսագրութիւնն ունենալու, կամ՝ տեղեկութիւններ և ուսումնասիրութիւններ՝ այն հետաքրքրական շրջանների նկատմամբ, որոնց մէջ գործել է Հանգուցեալը: Բայց այդ ցանկութիւնն անկատար մնաց մինչև այժմ: Գորա փոխարէն Կ. Պոլսոյ «Ճերիտէի Շարգիէ» տաճկարարքա թերթի մէջ Աէվ. ստորագրութեամբ մի յօդուած է լըյս տեսել, ուր հմուտ և Հանգուցեալի գործունէութեան ի մօտոյ ծանօթ զբնով գծած մի շարք ուշադրութեան արժանի դիտողութիւններ ենք գտնում: Թղթակիցը քաղելով զլիաւորապէս Արարսից, համառօտ տեղեկութիւններ Հանգուցեալի պաշտօնավարութեան մասին նորա յաճախակի պաշտօնէփոխութիւնից արդէն ոչ նպաստաւոր եզրակացութեան է յանգում՝ «Թէ կրթական և թէ վարչական ընդունակութեանցը» համար: «Փափագեանի մահուամբ մենակ մնացած Աղափիրեան, որ այս դարուս մէջ համալսարանական առաջին կամ անդրանիկ եկեղեցական և կպիսկոպոսն էս, ասում է նա, չնայելով ստացած բարձր կրթութեան և զարգացման, հակառակ Տ. Գեորգ կաթուղիկոսի ջանից և փափաքանաց, թէ ուսուցանելոյ և թէ կառավարելոյ ապիկարութիւնը չէր դարմանուէր . . . »: Նոյնպիսի անպատաս կարծիք յայտնելու ստիպուած է տեսնում՝ նա իրեն Աղափիրեան Սրբազանի գրական վաստակների նրկատմամբ ևս, չնայելով որ աշխատում է անաչառ լինել ամեն կերպ և չուրանալ նորա բնաւորութեան բարեմասնութիւնները՝ «մեղմ և անորժեկ» բարբի տէր լինելը, կուսակցութիւններից խոյս տալը, իրրև «բարի հոյ և բարի մարդ» ունեցած արժանիքները, անկեղծ և աննեղ հոգին և ըն, այլ և զբարարի թէ աշխարհաբարի մէջ ցոյց տուած հրմտութիւնն և սահուն ոճը, Առհասարակ ամբողջ յօդուածը կարելի է իրրև՝ ճշգրիտ գնահատութիւն ընդունել Հանգուցեալի արժանեացն ու թերութեանցը:

ՊԱՐՍՍԿԱՆՆԵՐ:

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԵՄԻՆ ԷԼՅՈՅ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ. *

Մ Ա Ք Ո Ւ .

Մաքուայ գաւառը Ատրպատականի Տիւսիսային արեւմտեան անկիւնագիծն է կազմում մի կողմից Ռուսաստանին և միւս կողմից Տաճկաստանին սահմանակից: Մաքուայ գաւառը Պարսկաստանում բոլորովին առանձնացած մի երկիր է: պետութեան մէջ առանձին մի պետութիւն: բնակիչները մեծ մասամբ թուրքեր և քիւրդեր: այստեղ է գտնուում Հայաստանի ամենաշանաւոր վանքերից մին ս. Թադէոս առաքեալը՝ այժմ զրկուած իր նախկին շքեղութիւնից: Աւանքի մօտ կայ իր սեփական գիւղը որի քահանան վանքում պաշտօն է կատարում: Այս գաւառումն է Տղմուտ գետը: Աւարայր գաշտը: Սանաարկոյ գաշտը: Արշակունի աւերակները: Մաքուն Պարսկաստանի կեդրոնի կամ միւս գաւառաց Տեա Տեազգրական: փոստայի ոչ մի յարաբերութիւն չունի: այստեղովն է անցկենում Տաճկաստանից դէպի Պարսկաստան տանող թրանզիտի ճանապարհը: Մաքուայ բոլոր թուրք և քրդաբնակ գիւղերում եկեղեցեաց: վանքերի: բերդերի: քաղաքի աւերակներ: խաչարձաններ կան: մահմադական բնակիչներն անդադար այդ յիշատակարանները ոչնչացնելու ետեւից են: բայց ամէն մի ճանապարհորդ իսկոյն նկատում է որ այս երկիրը Տնումն Տայերի սեփականութիւնն է եղել և նրանցով բնակուած:

Խօսել Մաքուի մասին և երկար կանգ չառնել ս. Թադէի վանոց վրայ: անիրաւութիւն կլինէր: Աւանքը Աւարայր գաշտի Տիւսիս արեւմուտքումն է: Մաքու Բերդաւանի Տարաւային կողմը 7 ժամ Տեաւորութեամբ՝ այդ բոլոր աւերակների մէջ 16 դարեայ պատկառելի մի Տնութիւն որ պատիւ է բերում Տայ ժողովրդի ջերմեանն զօրութեան: Աւանքի պարսպի տակից Տոտում է Մաքուայ գետի մի օժանդակ վտակ: Տաճարի շինութիւնը նորոգուել է Տայոց 978 թուին Ձաքարիա եպիսկոպոսի առաջնորդութեան օրով: շինութեան նախկին թուականը անյայտ է: Սակայն ամենապատուական և մեծածախս շէնքը գաւիթն է որ Տայոց 1267 թուին է շինուել: պատերի շուրջը երեք կարգ սրբոց արձաններ են քանդակած: սոցա վերն ու վարը ծաղկենկար ժապաւէններ: Աւանքը շարունակ ենթար-

կուել է քրդական յարձակումների: * մանաւանդ վերջի 10—15 տարիների ընթացքում երբ քրդերի յարաբերութիւնները վատացան Տայերի Տեաւ Առաջ ունեցել է Տողային մեծ Տարստութիւն: օսմ: և պարսից վեհապետներից շնորհուած: Աւանքին տարիներս ձեռնարկութիւն եղաւ վանքում ուսում: նարան Տաստատել: գաղթականներ բնակեցնել: սակայն քաղաքական պատճառներ արգելք եղան և այժմ անինամ գրութեան մէջ մնում է:

Այս կողմերում քաղաք չլինելու պատճառով Մաքու քաղաք է համարվում: ունի բերդ: այստեղ էր նստում գաւառի լիազօր կառավարիչ Տոչակաւոր Թէմուր խանը որ միահեծան տէր էր: այժմ իւր օրդին է: որ բազմաամսը աւելի թոյլ կառավարութիւն ունի: Մաքուն շինուած է փոքր Մասիս ստորոտում՝ 50 վերստ Տեաւորութեան վրայ: մօտ 400 տուն ժողովուրդ ունի: որից 78 տունը Տայեր են: մնացեալները թուրք: Տայերն ունին մի եկեղեցի ս. Աարդան անունով և մի քահանայ: ուսումնարան գոյութիւն չունի: Հայերը գաղթել են մեծ մասամբ Հին Բայազիդից: կան նաև Կարնեյիներ որոնք առեւտրով են զբաղուած: բնակչութեան մեծ մասը արՏեստաւորներ են: զրլխաւորապէս զինագործներ՝ որոնք խաների համար ձրի աշխատելուց ձանձրացել են: Երկնց տարագոյլը ածիլուելու ձեռով թուրքերից չեն զանազանուում: լեզուն միայն յայտնում է իրենց Տայ լինելը: Հետաքրքրական է Մաքուի ստացարանը: ուր ստոյղը ամբան են պատրաստում: Քաղաքից երկու վերստ դէպ արեւելք կայ մի քարածայռ որ ունի ծակեր: որոնցից դուրս է փչում սառնամանիք: այդ ծակերի դէմը շինուել է լիճ ուր սառնամանիքից ստոյց է ստացուում: Մի ուրիշ տեղում նոյնպիսի ծակերից ձմրան ցրտին տարութիւն է արտաշնչում: Այս երեւոյթները Մասեաց ստորերկրայ գաղտնիքներ են: որոնց բացատրութիւնն երկրաբաններին է մնում:

Մաքուից դէպ արեւմուտք 15 վերստ Տեաւորութեան վրայ է Քիշմիշ թէփե դիւղը 67 տուն Տայ բնակչով: զրազում են երկրագործութեամբ: ունին եկեղեցի և 2 քահանայ: մի ուսուցիչ: Թէե այս ընդարձակ գաւառին մէջ Տայեր քիչ են և ամէնից աւելի աւազակարարոյ ժողովրդոց զբացի: բայց չեն նեղուում: որովհետեւ խաները պաշտպանում են իրրե մի արգիւնաւետ տարրի: քանի որ թուրքերն և քիւրդերը իրենց ծուլութեամբ և անշնորհքութեամբ մեծ օգուտ չեն տալիս իրենց տէրերին:

Գաւառիս արեւելեան կողմը: Երասիս ափին: գտնուում է սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի Տոչակաւոր վանքը անշուք զրութեան մէջ: Աւան-

* Տեա. Աւարուս 1898, յոյիս: եր. 274:
 1. Տեա. Աւարուս, 1898 p. համար Ա. եր. Բ. եր. 38: 86.
 ԽՄԻ.

* Թէե կան ուխտի կիող իւրեր:

քաղաքական է քիչ հետուն գտնուող Գարաշամ հայրանակ զիւղը՝ բնակիչները աղքատ և ողորմելի վայրենի գրացիների հարստահարութեանց ենթակայ։ Նախապէս քան զիւրք վանաճայր ունի բայց ուսումնական հաստատութիւն ոչ։ Մարուայ քիւրքերը, Հաղարցիք, Ճէլալցիք, Արուսիք՝ Տաճկաստանից մեծ քանակութեամբ աւար բերին կոտորածների միջոցին, նաև բաւական թուով կանայք և աղջիկներ, որոնց մեծ մասը վերադարձրեց Վարէճի թափի խանը։

Մարուն հետու է թաւրիղից հինգ օրուան ճանապարհով։

Խ Ո Յ.

Մարուից երկու օրուան հեռաւորութեամբ գէպ հարաւ և թաւրիղից երեք օր գէպի արևմտեան հիւսիս, գտնուում է Խոյ քաղաքը, որ հնումն Պարսկահայոց Հեր գաւառի զխաւոր քաղաքն էր պարսպապատ է և վաճառաշահ, բաւական լայն և ծառազարդ փողոցներ ունի։ Ատրպատականում միակ քաղաքն է այս, որ կառավարչական յատուկ շինութիւն ունի, խիստ ընդարձակ և գեղեցիկ՝ Սուճաի Գէօվէից շինուած։ Բերդաքաղաքում այժմ հայեր չեն բնակուում, այլ միայն 2—3 վերստ գէպ արևմտեան հարաւ եղած արուարձաններում, որ Մահալէ է կոչուում։ այնտեղ 94 տուն հայեր ցրուած են երեք թաղերում թուրքերի հետ խառն, ունեն երկու եկեղեցի մի քահանայ Աօթուրցի որ վերջին գէպերի պատճառով իր ժողովրդի հետ այստեղ էր ապաստանել։ Խոյի հայերը առհասարակ աղքատ են, զբաղուած միմիայն արհեստներով՝ պայտառ, հիւան և զինագործ, միայն մի վաճառական կայ, սաստիկ ճնշուած են թուրքերից, արեւելութիւնը տարածուած է, գինի չկայ թէև՝ բայց ողին ջրի գաւաթով են խմում։ Խոյի ամբողջ գաւառում կայ միայն մի ուսումնարան, այն ևս ոչ յարատև, Բողոքական միսիոնարները մի ասորի քարոզիչ ունին այստեղ, որ Խոյեցիների առանց այն էլ ցաւալի գրութիւնը անտանելի է դարձնում։ Այս աւետարանի պաշտօնեան Օսմանցոց տիրահոջակ հիւպատոսի և սարմարաստի լրտեսը և վերջին ազէտալի գէպերի նախապատճառն է, Խոյից 7 վերստ գէպ հարաւ—արևմուտք գտնուում է Աւաղ զիւղը, որ անցեալ տարի ենթարկուեցաւ քրդերի յարձակման և զոհ գնացին 50 հայեր և 7 թուրք, Սէյտափար զիւղը ունի 80 տուն հայ բնակիչ, մի եկեղեցի և մի քահանայ, Մալհաղան 20 տուն բնակիչ ունի, որոնցից 12 տունը կաթողիկոսութիւն են ընդունել մի դատական խնդրի առթիւ։ Սալմաստի Միթիթարեան վարդապետը տարին մի անգամ գրնում է հոգեպէս սրանց միթիթարելու։

Առհասարակ Խոյի հայերը անտեսադէս աղ-

քատ, բարոյապէս սնանկ են, թրքաց աղղեցու թիւնը բոլորովն փճացրել է սոցա, Աւսումնարաններ չկան և դժուար էլ լինեն, որովհետև տեղացիները կարիք չեն զգում, անտարբերութիւնը անասնութեան հասցրած է, Հոգևոր բարձր իշխանութեան խորին ուշադրութեան արժանի են կորստեան ենթակայ այս հայերը։

Խոյի դաշտում մի բլուրի վրայ փոքրիկ մատուռ կայ, տեղացիների աւանդութեամբ ս. Աարդանի մարմինն այստեղ է ամփոփուած, բայց մեզ հաւանական չի թուում, քանի որ Աւարայր դաշտից բաւական հեռի է։

Խոյ գաւառին է վերաբերում նաև Աօթուր բերդաւանը, որ վերջին Ռուս—թրքական պատերազմից յետոյ պարսից ձեռքն անցաւ, Երկու տարի առաջ 96-ի գարնան այստեղ 35—40 տուն հայեր կային, Օսմ. կառավարութիւնը չկարողացաւ տանել որ իրեն այնչափ մտ գտնուող մի աւանի հայեր ազատ ապրեն, հրացան գործածելու իրաւունք ունենան և իր հպատակ հայ զիւղացիների հետ յարաբերութիւն անեն, սկսաւ իր սուլթական խարդախութիւններն ի գործ դնել՝ զբարտեղով Աօթուրցիներին պարսիկ պաշտօնէից առաջ իրր վնասակար մի տարր, երբ այս մեքենայութիւնները չզօրեցին՝ քրդական յարձակումները պարբերական դարձան որով ձանձրացան բերդապահները և պաշտօնեաները, շատ անգամ հայերը միացած պարսիկ սէրբաղներին հետ կուսեցին քրդերի հետ, վերջապէս պարսիկ կառավարութիւնը ստիպուեցաւ տեղի տալ և աւելորդ աղմուկներից և ընդհարումներից ազատուելու համար Աօթուրի հայերին պարտաւորեցրեց հեռանալ և Խոյի դաշտում իրենց ուղած տեղը բնակել, Խեղճ զիւղացիք երկար ժամանակ քաշ եկան Խոյում և Աւառում, կառավարութեան և ազգային իշխանութեան ղիմելին, կրկին իրենց տեղը վերագտնալու համար, Առաջնորդը յաջողեցաւ կառավարութիւնից հրաման և պաշտօնեաներ ստանալ, որոց հսկողութեամբ հայերը Աօթուր պիտի երթային իրենց ցանքերը հնձելու, իսկ վերըստին բնակութիւնը զիւանագիտութեան հակառակ համարուեցաւ։

Տեղւոյն քիւրդերը և խանը ցանքերի մեծ մասին տէր դարձան, պատճառ բերելով թէ իրենք են պահպանել, Այս գրութիւնը շարունակուեց մինչև 97-ի գարունը, երբ Գերմանացի միսիոնարները Խոյում տեսնելով նրանց թշուառ գրութիւնը գրամական օգնութիւն արին և յորդորեցին որ Աօթուր վերադառնան, Առաւարտութիւնը պլէս ուշադրութիւն չդարձրեց, 17 ընտանիք համաձայնեցան և դարձան, նոյն 97 թուի ամբան Խանասորի վերջին ազէտարեր անցքերի պատճառով Մարզիցի քրդերը միացած ուրիշ շատերի հետ նախ յարձակուեցան Աօթուրի վրայ տեղւոյն հայերը բնա-

ջինջ անելու. երբ հայերը ոչ մի պաշտպանութիւն չգտան Պարսիկ բերդապահներէն և տեսն իրենց անտարակոյս փճացումը, զիմեցին իրենց զրացի քիւրդերին և խոստացան հաւատափոխ լինել եթէ պաշտպանուին. Մարզկցիք այլևս չզգան Ղ.օթուրցոց և շարունակելով իրանց ընթացքը յարձակուեցան Խոյի վրայ, կոտորեցին Վառուժ եղած Ղ.օթուրցիներէն 50, և 7 էլ թուրք, թալանեցին թըրքարնակ մի քանի զիւղեր, Թեմակալ Առաջ. Փոխանորդը տակաւին բանակցութեան մէջ էր կառավարութեան հետ այս խնդրոց մասին, երբ մեկնեցաւ իր պաշտօնավայրից. իսկ այժմ ինչպէս լսում ենք Ղ.օթուրցիք կրօնը զոհել են բնակավայրի համար. Ղ.օթուրցոց մի մասը գեւ թափառում են Խոյում և Վառուժ. Ղ.օթուր թէև Պարսից հող, բայց աւելի ենթարկուած է քրդական ազդեցութեան. Բանի որ հայերը չեն ուզում երկրի ներքը բնակուել՝ Ղ.օթուրում ուրիշ կերպ չեն էլ կարող ապրել ներկայ պայմաններով:



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՀՈԳԵԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ
ԴՐ. ԿՐԷՊԷԼԻՆԻ.

(Քաղաքաճօրէն թարգմանութիւն)

Այժմեան մեքենաների զլխաւոր յատկութիւններից մէկն էլ այն է, որ մենք միշտ կարող ենք կանխաւ և անսխալ իմանալ իրանց զօրութեան և աշխատութեան չափը. մեքենան ճիշտ այնպէս է գործում ինչպէս որ ապահովեցրել է շինողը: Ասել են, թէ մարդս էլ մեքենայ է. սակայն եթէ մենք շատ ուքիշ հաւանականութեամբ կարողանանք գուշակել, թէ այդ մեքենայի պահպանութեան համար որքան սնունդ հարկաւոր կը լինի, մեզ համար մինչև այսօր մութը խնդիր է մնում: Թէ մարդկային մեքենան որչափ գոյժ կարող է կատարել:

Ձինուորական բժիշկը հարկաւ միշտ կարող է մի ակնարկով իմանալ, թէ իւր առաջ կանգնած երիտասարդը արդեօք յարմարու-

թիւն ունի՞ զինուորական ծառայութեան համար. ուժաշափ մեքենայի սլաքով մենք ամէնքս կարող ենք իմանալ, թէ մեր բազկի զօրութիւնը որչափ ծանրոց կարող է տանել: Բայց երբ որ հարկաւոր լինի իմանալ մեր հոգեկան զօրութեան աստիճանը, մեր բարոյական և մտաւոր վաստակի քանակութիւնը, մենք կը դժուարանանք գանել մի չափ, որ անոր ցուցմամբ ստուգենք մեր հոգեկան պիտանութեան արժէքը:

Հապա մեր հարցաքննութիւնները միթէ չեն նշանակում մի այգպիսի չափի գործածութիւն: Բայց դժուար չէ համոզուիլ, որ հարցաքննութիւնների սովորութիւնը լոկ միայն մի խարուսիկ պատրանք է դառնում: Վասն զի հարցաքննութիւնների միակ և գըլխաւոր նպատակ է դարձել՝ ստուգել այն ծանօթութիւնները, որ հարցաքննուողը արդէն ձեռք է բերել համապատասխան բաժնի մէջ: Բնիկները կարծում են, թէ այգպիսի ծանօթութիւնների ընդարձակութիւնից կարող են եզրակացնել և դադափար ստանալ քննուողի հոգեկան կարողութիւնների մասին: Սակայն փորձը միշտ հակառակն է հաստատել. միթէ կեանքի մէջ այն մարդիկ միշտ լաւ մշակ են հանդիսանում, որոնք հարցաքննութիւնների ժամանակ փառաւոր յաղթանակ են ստացել: Բանիքը զոցանից չեն կարողացել իրանց յիշողութեան մէջ ամբարաճները խորհրդով գործադրել. քանիսի՞ աշխատութիւնը կեանքի մէջ եղել է յեղյեղուէի անփոյթ և թափաւոր դիմացկութիւնից: Մի խօսքով, եթէ կարմիր սեղանի կշախն հարցաքննութիւններով կարողանանք մասամբ թափանցել ուրիշի գիտութեան մէջ, անհնարին է դառնում ճըշգուցութեամբ իմանալ, թէ նոյն մարդու կարողութիւնն ու գործքը ինչ կը լինի: Եւ որովհետեւ մարդու յաջողակութիւնը ճանաչելու համար այսպէս անօգուտ են հանդիսանում հարցաքննութիւնները, իսկ մի ուրիշ աւելի արդիւնաւոր հնար տակաւին չենք գտել — զուարճախօսի մէկը սակ է, թէ հարցաքննութիւնների փոխանակ աւելի լաւ է գործածել կշիռք և ծանրութեամբ իմանալ, թէ ո՞վ կը լինի պիտանացու, զոր օր. ո՞վ կարող է լինել լաւ բարեկամ կամ բնաիր սպասաւոր: Եւ